Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ղեկավարի՝ 2017 թվականի 2-րդ կիսամյակի հաշվետվություն

- **Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառ**

Հաշվետու ժամանակաշրջանում այս բնագավառում համայնքի ղեկավարի կողմից ներկայացվել են համայնքի շահերը բոլոր կարգի հարաբերություններում: Հատկացվել է 236 տեղեկանք, 2 բնակիչների հատկացվել է բնութագիր, քաղաքացիների կողմից ներկայացված թվով 26 դիմումների ընթացք է տրվել: Քաղաքացիների կողմից բողոքներ չեն եղել:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 26 որոշում և արձակվել է 7 կարգադրություն :

Ուղարկվել են 117 պաշտոնական գրություններ մարզի ֆեդերալ կառույցների ղեկավարներին:

2017 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում ընթացքում համայնքի ավագանին գումարել է 2 արտահերթ և 3 հերթական նիստեր : Արտահերթ նիստերը հրավիրվել են համայնքի խիստ հրատապ հարցերի քննարկման համար: Մասնավորապես կատարվել են բյուջեի փոփոխություններ և ազատ միջոցների բաշխում:

- **Ֆինանսների բնագավառ**

2017 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում Խորոնքի համայնքապետարանի աշխատակազմը ավագանու հաստատմանն է ներկայացրել համայնքի բյուջեում կատարված փոփոխությունները: Համայնքի ղեկավարը վերահսկել է բյուջեի միջոցները և ապահովել դրանց նպատակային օգտագործումը:

1. *Համայնքապետարան՝*

1.1 . Աշխատավարձ-	15411.500	դրամ գումար
1.2. Պարգևատրում -	1227.000	դրամ գումար
1.3. Էներգետիկ ծառ.-	1026.900	դրամ գումար
որից՝ գազ -	400.000	դրամ գումար
1.4. Կապի ծառայություն –	96.000	դրամ գումար
1.5. Ապահովագրական ծախսեր-	31.000	դրամ գումար
1.6. Համակարգչային ծառայություն-	152.500	դրամ գումար
1.7. Տեղեկատվական ծառայություն-	193.000	դրամ գումար

1.8. Ներկայացուցչական ծախսեր - հոդված՝ 4237 - 349.600 դրամ գումար,

1. –Վերջին դաս՝ 200.000 դրամ գումար

2. - աշխատողներին նվերներ՝ 149.600 դրամ գումար

1.9. Ընդհանուր բնույթի ծառ.- հոդված՝ 4239՝- 236.000 դրամ գումար,

որից՝ 1. համայն.աշխ. 2-օրյա հանգիստ - 200.000 դրամ գումար

2.«Մաքուր ջուր»՝ ՍՊԸ -՝ 36.000 դրամ գումար

1.10. Ընթացիկ նորոգում - հոդված՝ 4251 - 236.411 դրամ գումար

որից՝ 1. համայնքապետարանի շենքի խմելաջրի ջրագծի կառուցում - 200.000 դրամ գումար

2.բաքսիի վերանորոգում -՝ 36.411 դրամ գումար

1.11. Գրասենյակային նյութեր- հոդված՝4261 - 300.000 դրամ գումար

1.12. Տրանսպորտային նյութեր- հոդված՝4264 - 650.000 դրամ գումար

1.13. Հատուկ նպատակային նյութեր – հոդված՝ 4269 -350.300 դրամ գումար

1.14.Վարչական սարքավորումներ – հոդված՝ 5122 - 798.000 դրամ գումար

1.15.Պարտադիր վճար, գումարի հետվերադարձ– հոդված՝ 4823 - 184.300 դրամ գումար

2. Ընդհանուր բնույթի հանրային ծառ. – 2008.000 դրամ գումար

որից՝ հոդված 4237 - աման.նվերներ 998.000 դրամ գումար,

հոդված՝ 4239 - 660.000 դրամ գումար

որից՝ ծաղկեպսակ – 450.000դրամ գումար

դիակառք- 210.000դրամ գումար

հոդված՝ 4251 - կանգառների վերանորոգում 150.000 դրամ գումար

գերեզմանատան ցանկապատի վերանորոգում-200.000 դրամ գումար

3. Ճանապարհների նորոգում- 1.390.000 դրամ գումար,

հոդված 4259 -գյուղամիջ. ճանապարհների խճապ.- 400.000 դրամ գումար

հոդված 5113 – ասֆալտապատում - 990.000 դրամ գումար,

4. Աղբահանում- 1040.000 դրամ գումար

5. Ջրամատակարարում- 15.760.000 դրամ գումար

որից՝ հոդված 4239 - 200.000 դրամ գումար

հոդված 4241- 100.000 դրամ գումար

հոդված 5112 - 15260.000 դրամ գումար,

6. Փողոցների լուս. ընթացիկ նորոգում- 500.000 դրամ գումար

որից՝ հոդված 4251 - 250.000 դրամ գումար

հոդված 4269 - 250.000 դրամ գումար.

7.Հանգիստ մշակույթ և կրոն - *4428.419 դրամ գումար*

որից՝ հոդված 4111 - 3878.419 դրամ գումար

հոդված 5122 - 200.000 դրամ գումար,

հոդված 4269 - 50.000 դրամ գումար,

հոդված 4239 - 100.000 դրամ գումար,

հոդված 4237 - 200.000 դրամ գումար,

8. Նախադպրոցական ուսուցում- *9644.400 դրամ գումար*

9.Գյուղատնտեսություն՝ հոդված 4111 - *399.900* դրամ գումար,

10. Սոցանապահովներ- *1680.000դրամ գումար*

- Հողի հարկ և գույքահարկ

2017 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում համայնքի հողօգտագործողներից գանձվել և համայնքի բյուջե է մուտքագրվել 8.704.938 դրամ հողի հարկ , որը կազմում է համայնքի տարեկան հողի հարկի 101.3% :

2017 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում գույքահարկի գծով բյուջեի եկամուտների մասով գանձվել և համայնքի բյուջե է մուտքագրվել փոխադրամիջոցների գույքահարկ՝ 3.798.541 դրամ գումար (93.7%), շինությունների գույքահարկ՝ 338.9 դրամ գումար(127.3%):

Վարձակալական հողերի վարձը 2017 թվականի2-րդ կիսամյակի ընթացքում կազմել է 801.200 (106.83%) դրամ գումար, իսկ տեղական տուրքերը՝ 282.200 (57.6%) դրամ գումար, տեղական վճարներ 1575.540 (98.7%) այլ ոչ հարկային եկամուտներ՝174.798 (76%):

- Պաշտպանության բնագավառ

Համայնքի ղեկավարի կողմից աջակցություն է ցուցաբերվել քաղաքաշտպանության մարմինների գործունեությանը:

- Գյուղատնտեսության բնագավառ

Համայնքապետարանը աջակցել է գյուղացիական տնտեսություններին հողօգտագործման աշխատանքներում: Համայնքում առկա հողատարածքներն ունեն հետևյալ բաշխումը.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 525.20 հա
- բնակավայրային նշանակության հողեր՝ 142.43 հա
- վարելահողեր՝ 372.30 հա
- խաղողի այգիներ՝ 5.3 հա
- պտղատու այգիներ՝ 0.36 հա

2017 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում արտադրվել է և հանրապետության շուկաներ են հանվել 10932 տոննա բանջարեղեն, 2920 տոննա ձմերուկ,1101 տոննա կարտոֆիլ, 248 տոննա հացահատիկ և շուրջ 96 տոննա խաղող:

Աշնանը համայնքում կատարվել է 52 հա աշնանացան հացահատիկի ցանքս :

Մարզպետարանից տրամադրվել է ՀՀ կառավարության կողմից հատկացված շուկայական գնից էժան 56 ազոտական պարարտանյութ: Համայնքի ղեկավարն աջակցել է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը: Կազմակերպել է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության հակահամաճարակային միջոցառումներ, կենդանիների հիվանդությունների կանխման աշխատանքներ:

Անասունների գլխաքանակը 01.01.2018 թվականի դրությամբ կազմում է՝ Խոշոր եղջերավոր անասուններ՝ 268 գլուխ, որից՝ կովեր՝ 80 գլուխ, մանր եղջերավոր անասուններ՝ 45 գլուխ, որից մայրականը՝ 30 գլուխ, խոզերի գլխաքանակը կազմել է 370 գլուխ, որից մայրական կազմը՝ 68, մեղվաընտանիքներ՝ թվով 10:

- **Քաղաքաշինության բնագավառ**

Աջակցություն և վերահսկողություն է իրականացվել համայնքում բնակարանաշինության ոլորտում:

2017 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում տրվել է 1 շինարարության թույլտվություն: Վերանորոգվել է մայրուղու երկարությամբ ձգվող փողոցային լուսավորությունը, որի համար ծախսվել է 500.000 դրամ գումար:

Աղբահանության աշխատանքները գյուղում կատարվում են մշտապես և անխափան: Այդ աշխատանքների համար 2017 թվականի ընթացքում հատկացվել է 1040.000 դրամ գումար: Աշխատանքները կատարվում են շաբաթական մեկ անգամ: Աղբը տեղափոխվում է այդ նպատակի համար հատկացված վայրում:

Վերանորոգվել է գերեզմանատան ցանկապատը, որի համար հատկացվել է 200.000 դրամ գումար: Համայնքում գործում է դիակառքի ծառայություն, որի համար տարեկան հատկացվում է 210.000 դրամ գումար: Հանգուցյալների հիշատակին նվիրված ծաղկեպսակներ ձեռք բերելու համար հատկացվել է 225.000դրամ գումար:

Համայնքում կանգառների վերանորոգման աշխատանքները կազմակերպելու համար հատկացվել է 150.000 դրամ գումար:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կողմից տրամադրված և համայնքապետարանի պահուստային ֆոնդի միջոցների հաշվին 15260.000դրամ գումար է հատկացվել համայնքում խմելաջրի ներքին ցանցի կառուցման համար:

- **Հողօգտագործման բնագավառ**

2017 թվականի ընթացքում կազմվել է ընթացիկ տարվա հողային հաշվեկշիռը և հանձնվել մարզպետարան:

Կատարվել են հողերի չափագրման աշխատանքներ:

Ընթացքի մեջ է նաև շուրջ 9 հա հողատարածքի վարձակալության հանձման գործընթացը:

- **Առևտրի և ծառայությունների բնագավառ**

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից հսկողություն է իրականացվել առևտրի ծառայությունների ոլորտում:

- **Տրանսպորտի**

Կատարվել են գյուղամիջյան ճանապարհների խճապատման աշխատանքներ, որոնց համար տրամադրվել է 400.000 դրամ գումար: Համայնքի կենտրոնական ճանապարհի կապիտալ վերանորոգման նպատակով հատկացվել է 990.000 դրամ գումար:

- **Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ**

Գործում է ըմբշամարտի խմբակ: Կազմակերպվում են միջհամայնքային մարզական մրցույթներ: 2017 թվականի օգոստոսի 27-ին կայացած բազկամարտի բաց առաջնության կազմակերպման համար տրամադրվել է 200.000 դրամ գումար:

- **Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառ**

Համայնքապետարանը մեծ ուշադրություն է դարձնում միջնակարգ դպրոցի և մանկապարտեզի գործունեությանը միաժամանակ ցուցաբերելով իր աջակցությունը բոլոր հարցերում՝ մատաղ սերնդի կրթության և դաստիարակության զարգացման մակարդակն ավելի ամուր հիմքերի վրա պահելու մտայնությամբ:

Համայնքում գործում է մեկ դպրոց , որտեղ սովորում է 310 աշակերտ և գործում է մանկապարտեզ՝ 70 երեխայի հաճախումով և 15 աշխատակցով:

Մանկապարտեզի ավագ և միջին սաներին տարեվերջյան հանդեսին նվիրված միջոցառման համար նվերներ գնելու նպատակով հատկացվել է 200.000 դրամ գումար , իսկ աշնան հանդեսի կապակցությամբ նվերներ գնելու համար տրամադրվել է 30.000 դրամ գումար :

Դպրոցի ավարտական դասարանի սաներին նվերներ գնելու համար հատկացվել է 200.000 դրամ գումար:

Համայնքապետարանի աշխատակիցների 2-օրյա հանգիստ կազմակերպելու նպատակով հատկացվել է 200.000 դրամ գումար:

Համայնքի բնակիչների անգիստն ու ժամանցը կազմակերպելու նպատակով 250.000 դրամ գումար է հատկացվել մշակույթի տան համար գույք և բիկիարդի պարագաներ ձեռք բերելու համար:

Մշակույթի տանը տարեմուտի միջոցառում կազմակերպելու համար համար տրամադրվել է 79.000 դրամ գումար: Նոր տարվա կապակցությամբ 998.000 դրամ գումար է հատկացվել համայնքի 1-ից 10 տարեկան թվով 350 երեխաներին ամանորյա նվերներ գնելու համար: Համայնքապետարանում ամանորյա միջոցառում կազմակերպելու նպատակով հատկացվել է 150.000 դրամ գումար:

- **Սոցիալական բնագավառ**

Համայնքապետարանի մշտական հոգածության և ուշադրության կենտրոնում են եղել նպաստառուները և կենսաթոշակառուները:

Հաշվետու ժամանակաշրջանում 1.170.000 դրամ ֆինանսական օգնություն է ցուցաբերվել , այդ թվում՝

1. հիվանդ և սոցիալապես անապահով 12 ընտանիքների տրամադրվել է 560.000 դրամ գումար,
2. նորածին երեխաներ ունեցող 19 ընտանիքների՝ հատկացվել է 570.000 դրամ
3. «Էջմիածնի ավտոդպրոց» ՍՊԸ սովորող 2 երեխաների՝ 40.000 դրամ

- **Ազգաբնակչություն**

Համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 2937 մարդ: 2017 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում ծնվել է 16 և մահացել է 6 մարդ:
Ընտանեկան նպաստ ստացողների թիվը կազմում է 40 մարդ , թոշակառուները 220 մարդ:

- **Համայնքի հիմնախնդիրներ**

ա. համայնքի հիմնախնդիրներից է համարվում համայնքամիջյան ճանապարհների նորոգումը,
բ. բնակավայրի (տնամերձների) ոռոգման ջրի համակարգի վերջնական կառուցումը՝ ներտնային համակարգի միացման աշխատանքները,
դ. վերանորոգման կարիք ունեն համայնքի մանկապարտեզը և մշակույթի տունը ,
ե. խիստ անհրաժեշտություն է դպրոցում սպորտդահլիճի կառուցումը:

Խորոնք համայնքի ղեկավար՝ /Ս. Նահապետյան/